## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## <<Գյումրու <<Երեխաների Տուն>> ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՄԱՔՐԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ՝

«29» հունվար 2021 ԹՎԱԿԱՆԻ

**N «ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-Ա»**

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Գյումրի «17» «մարտ» 2021թ.

<<Գյումրու <<Երեխաների Տուն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Պ. Վալեսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱԶՈՒՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝Ա. Երիցյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի XV-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով 29.01.2021թ. N **«ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-Ա»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված սննդամթերքի մատակարարման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ*

1.1 Պայմանագրի 3.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը կազմում է **795090** (յոթ հարյուր իննսունինը հազար իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի:

### *2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ*

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### *3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ*

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են ____ էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

| Գ Ն Ո Ր Դ | Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ |
|---|---|
| <<Գյումրու<<Երեխաների տուն>> ՊՈԱԿ | «ԱԶՈՒՐ» ՍՊԸ |
| ք. Գյումրի, Թամանյան 17 | Ք. Երևան Նորք 1-ին նրբ.5տ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| h/h 900218000942 | Հ/Հ 16600613116200 |
| հվհհ 05521918 | ՀՎՀՀ՝ 02288121 |
| Տնօրենի պարտ. կատ. ____ Պ. Վալեսյան | Տնօրեն ____ Ա. Երիցյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
17.03.2021 թ. կնքված
«ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-Ա» ծածկագրով պայմանագրի
Համաձայնագիր 1-ի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքի անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 39831244 | Տնտեսական օճառ | Արտերկրում ետիկս | Չորսուների տեսքով տնտեսական օճառ 72 %-անոց, ոչ պակաս 150 գ-ից, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 OC, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ3-ից ոչ պակաս, անվտանգությունը՝ Սան Պին 1.2.681-97 : | կգ | 200 | 2000 | 10 | ք. Գյումրի, Թամանյան 17 | 10 | Պայմանագրին ուժի մեջ մտնելուց և համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ առաջին մատակարարումը՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, հաջորդ մատակարարումները պատվիրատուի հայտի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 25.12.2021թ. |
| 9 | 39513200 | Անձեռոցիկ | Լատասոֆտ | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": | հատ | 90 | 9000 | 100 | | 100 | |
| 10 | 39831271 | Սպունգի սպիրալ | Ման ՍՊԸ | 14-16 գրամ, ալյումինե, նախատեսված կաթսաների և թավաների մաքրման համար: | հատ | 55 | 3300 | 60 | | 60 | |
| 12 | 39831210 | Աման լվացող հեղուկ | Արտերկրում ետիկս | Մածուկանման զանգված, թանձր, հաճելի հոտով, գույնը ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի , ջրածնային ցուցիչը PH'9-10,5, մակերևույթաակտիվ նյութի զանգվածային մասը ՝ ոչ պակաս18% , ջրում չլուծվող նյութերի զանգվածային մասը ՝ ոչ ավել 3%, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավել 50%,չափածրարված պոլիմերային տարաներում՝1000 գ զանգվածով:Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված <Մակերևութաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի >, պիտանելիության մնացորդային ժամկետը 60 %-ից ոչ պակաս: | լիտր | 220 | 55000 | 250 | | 250 | |
| 13 | 39831000 | Մաքրող փոշի /Ռաքշա/ | Արտերկրում ետիկս | Լվացող և մաքրող փոշի՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված հոտավորիչի հոտով, pH-ը՝ 5,0-11,5, լվացող մաքրող ունակությունը՝ 85%-ից ոչ պակաս, փաթեթավորված՝ 200-ից մինչև 500գ կշռաբաժիններով՝ պոլիմերային կամ այլ տարաներում: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևույթաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի", | կգ | 319 | 3190. | 10 | | 10 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 39831247 | Սանհանգույցի մաքրման համար հեղուկ | Արտկոսմ ետիկս | Զուգարանակոնքի և վաննաների լվացող և մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրէասպան և ախտահանիչ միջոց՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված հոտավորիչի հոտով, 1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս. խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, փաթեթավորված՝ 750 մլ պոլիմերային կամ այլ տարաներում, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի": | լիտր | 445 | 89000 | 200 | | 200 | |
| 17 | 39831243 | Լվացքի փոշի ավտոմատ լվացքի մեքենաների համար | Դեվա | Բաղադրությունը՝ մինչև 5 % պոլիկարբօքսիլներ պարունակող կատրիոնային. արտաքին ակտիվ (ԱԱՆ)նյութերից, 5-15 % թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30 % անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը՝ ըստ կիրառված հոտավորիչի, նախատեսված գունավոր կամ սպիտակ հագուստի լվացման համար: սպիտակությունը՝ 60 %-ից ոչ պակաս: | կգ | 408 | 612000 | 1500 | | 1500 | |
| 22 | 39831000 | Սալահատակի մաքրող նյութ | Արտկոսմ ետիկս | Մաքրող-լվացող և ախտահանող մածուկ, չշերտավորվող մածուկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45%-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2,5%-ից ոչ պակաս: Փաթեթավորված պոլիմերային տարայում 0,5կգ զանգվածով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N1795-Ն որոշմամբ հաստատված'Մակերևույթաակտիվ միջոցների և Մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի' | լիտր | 410 | 0 | 0 | | 0 | |
| 23 | 39831240 | Սպիտակեցնող հեղուկ /ավտոմատ լվացքի մեքենայի համար/ | Արտկոսմ ետիկս | Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ ավտոմատ մեքենաների համար, ակտիվ քլորի պարունակությունը 120-ից ոչ պակաս: | լիտր | 108 | 21600 | 200 | | 200 | |

**Գ Ն Ո Ր Դ**

<<Գյումրու<<Երեխաների տուն>> ՊՈԱԿ
ք. Գյումրի, Ճամանյան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900218000942
հվհհ 05521918

Տնօրենի պարտ. կատ. ________ Պ. Վալեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
Ք. Երևան Նորք 1-ին նրբ.5տ
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660061316200
ՀՎՀՀ 02288121

Տնօրեն ________ Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*17.03.2021 թ. կնքված*
*«ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-Տ-ԳԵՏ-Ա» ծածկագրով պայմանագրի*
*Համաձայնագիր 1-ի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 6 | 39831244 | Տնտեսական օճառ | | | | 222 | 444 | 667 | 889 | 1111 | 1333 | 1556 | 1778 | 2000 | 2000 |
| 9 | 39513200 | Անձեռոցիկ | | | | 1000 | 2000 | 3000 | 4000 | 5000 | 6000 | 7000 | 8000 | 9000 | 9000 |
| 10 | 39831271 | Սպունգի սպիրալ | | | | 367 | 733 | 1100 | 1467 | 1833 | 2200 | 2567 | 2933 | 3300 | 3300 |
| 12 | 39831210 | Աման լվացող հեղուկ | | | | 6111 | 12222 | 18333 | 24444 | 30556 | 36667 | 42778 | 48889 | 55000 | 55000 |
| 13 | 39831000 | Մաքրող փոշի /Ռաքշա/ | | | | 354 | 709 | 1063 | 1418 | 1772 | 2127 | 2481 | 2836 | 3190 | 3190 |
| 15 | 39831247 | Սանհանգույցի մաքրման համար հեղուկ | | | | 9889 | 19778 | 29667 | 39556 | 49444 | 59333 | 69222 | 79111 | 89000 | 89000 |
| 17 | 39831243 | Լվացքի փոշի ավտոմատ լվացքի մեքենաների համար | | | | 68000 | 136000 | 204000 | 272000 | 340000 | 408000 | 476000 | 544000 | 612000 | 612000 |
| 22 | 39831000 | Ապահատակի մաքրող նյութ | | | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 23 | 39831240 | Սպիտակեցնող հեղուկ /ավտոմատ լվացքի մեքենայի համար/ | | | | 2400 | 4800 | 7200 | 9600 | 12000 | 14400 | 16800 | 19200 | 21600 | 21600 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Գ Ն Ո Ր Դ**

<<Գյումրու<<Երեխաների տուն>> ՊՈԱԿ
ք. Գյումրի, Թամանյան 17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900218000942
հվհհ 05521918

Տնօրենի պարտ. կատ. ______________ Պ. Վալեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
Ք. Երևան Նորք 1-ին նրբ.5տ
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660061311620[illegible]
ՀՎՀՀ՝ 02288121

Տնօրեն ______________ Ա. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.